ZVARTNOTS
"Armenia" International Airports" C.J.S.C.

"ARMENIA" INTERNATIONAL AIRPORTS"
CLOSED JOINT STOCK COMPANY
«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Yerevan, 2 March 2017

Mr. Mikhail Yukhanaev
Director of
UMAKS LTD
36 Demirchyan Street, # 1a
Yerevan City 0002
Republic of Armenia

Ref: 100/ADM/17

Respectful Mr. Yukhanaev,

Please be informed that for the purpose of upgrading the level of services rendered at "Zvartnots" International Airport Cargo Terminal, our company developed new model requests for sorting, storing and handing over of the courier items (see the samples attached).

Starting from 9 March 2017, should you need any of the mentioned services, please kindly present such requests duly filled in, signed and sealed by your authorized representative.

We also kindly request you to provide us with the list of those persons and the original power of attorneys issued to them, who will be authorized act at "Zvartnots" International Airport Cargo Terminal for the purpose of signing the service requests and performing the authorities stated in the power of attorney with regard to the courier items arrived in your name.

Thank you for cooperation.

Attached 11 pages.

Sincerely,

Երևան, 2 մարտի 2017թ.

ՅՈՒՄԱԿՍ ՍՊԸ-ի Տնօրեն
Պարոն Միխաիլ Յուխանանին
Դեմիրճյան 36, # 1ա
ք. Երևան 0002
Հայաստանի Հանրապետություն

Ելից: 100/ADM/17

Հարգելի պրն. Յուխանան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի Բեռնային համալիրում մատուցվող ծառայությունների մակարդակը բարելավելու նպատակով մեր ընկերության կողմից մշակվել են փոստային առաքանիների տեսակավորման, պահեստավորման և հանձնման վերաբերյալ փաստաթղթերի/պատվերների նոր ձևաթղթեր (օրինակները կցվում են):

Սկսած 2017թ. մարտի 9-ից յուրաքանչյուր նշված ծառայության պահանջի դեպքում խնդրում ենք ներկայացնել տվյալ պատվերները Ձեր լիազոր ներկայացուցչի կողմից պատշաճ կերպով լրացված, ստորագրված և կնքված:

Խնդրում ենք նաև մեզ տրամադրել այն անձանց ցուցակը և իրենց տրված լիազորագրերի բնօրինակները, որոնք լիազորված կլինեն հանդես գալու «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի Բեռնային համալիրում ծառայությունների պատվերները ստորագրելու և Ձեր անունով ժամանած փոստային առաքանիների հետ կապված՝ լիազորագրում մատնանշված գործողությունները կատարելու համար:

Շնորհակալություն համագործակցության համար:

Առդիր՝ 11 էջ:

Հարգանքներով՝

"ARMENIA" INTERNATIONAL AIRPORTS" C.J.S.C.
«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

Andranik Shkhyan
Անդրանիկ Շխյան
Deputy General Manager
Գլխավոր մենեջերի տեղակալ

Zvartnots International Airport
AIA Building
Yerevan 0042, Republic of Armenia
Tel: 00 374 10 49 30 00
Prepared by Maria/LEG

Զվարթնոց Միջազգային Օդանավակայան
ԱՄՕ շենք
Երևան 0042, ՀՀ
Հեռ: 00 374 10 49 30 00

REQUEST

FOR HANDING THE COURIER ITEM OVER TO THE RECIPIENT

"ARMENIA" INTERNATIONAL AIRPORTS" CJSC (Taxpayer ID 02562664, legal domicile 0010 RA, Yerevan, Mashtots avenue 13, activity domicile RA, Yerevan-42, "Zvartnots" International Airport, AIA building) represented by _____ Mr. _____, acting on the basis of the power of attorney, hereinafter **AIA,** on one hand,

and

_____(Taxpayer ID _____, activity domicile _____) represented by _____ Mr. _____, acting on the basis of _____, hereinafter referred to as **Customer**, on the other hand,

collectively hereinafter Parties:

Whereas:

- The Customer carries out delivery of international courier items. Such process includes sorting, transportation and delivery of the courier item from the office of the courier operator to the recipient,
- The courier items to be delivered by the Customer arrive in "Zvartnots" International Airport Cargo Terminal, hereinafter Cargo Terminal, where based on the Customer's request dated ---- AIA sorts and stores courier items,
- The Customer does not have the opportunity to ensure permanent presence of his representative at

ՊԱՏՎԵՐ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՔԱՆԻՆ ՍՏԱՑՈՂԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» փակ բաժնետիրական ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02562664, գտնվելու վայրը՝ 0010 ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պողոտա 13, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան-42, Զվարթնոց միջազգային օդանավակայան, ԱՄՕ-ի շենք), ի դեմս _____ պարոն _____, որը գործում է լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ **ԱՄՕ**, մի կողմից,

և

_____, (ՀՎՀՀ՝ _____, գտնվելու վայրը՝ _____), ի դեմս _____ պարոն _____ի, որը գործում է _____ հիման վրա, այսուհետ՝ **Պատվիրատու**, մյուս կողմից,

միասին անվանվելով Կողմեր.

Հաշվի առնելով, որ.

- Պատվիրատուն իրականացնում է միջազգային սուրհանդակային առաքանիների առաքում, որպիսի գործընթացն իր մեջ ներառում է սուրհանդակային կապի օպերատորի գրասենյակից՝ սուրհանդակային առաքանու տեսակավորումը, փոխադրումը և հանձնումն ստացողին,
- Պատվիրատուի կողմից հանձնման ենթակա սուրհանդակային առաքանիները ժամանում են Զվարթնոց միջազգային օդանավակայանի բեռնային համալիր, այսուհետ՝ Բեռնային համալիր, որտեղ համաձայն Պատվիրատուի կողմից _____թ.-ին տրված Պատվերի ԱՄՕ-ն իրականացնում է սուրհանդակային առաքանիների տեսակավորումն ու պահպանությունը,
- Պատվիրատուն հնարավորություն չունի ապահովել իր ներկայացուցչի մշտական

the Cargo terminal to hand over the courier items located there to the recipients,

– The Customer, in case of absence of his representative from the Cargo Terminal, wishes to hand over the courier items by AIA employees, and AIA agrees to render the relevant service,

ներկայությունը Բեռնային համալիրում այնտեղ գտնվող սուրհանդակային առաքանիները ստացողներին հանձնելու համար,

– Պատվիրատուն ցանկանում է Բեռնային համալիրում իր ներկայացուցչի բացկայության դեպքում սուրհանդակային առաքանիների հանձնումը կազմակերպել ԱՄՕ աշխատողների միջոցով, իսկ ԱՄՕ-ն համաձայնվում է մատուցել համապատասխան ծառայություն,

Based on the requirements of RA Law "On Postal Communication", RA Law "On Customs Regulation", Customs Code of the Customs Union, RA Government Decree N 173-N dated 16.02.2012 "On Approving the Regulations of Courier Communication Operator" they agree on the terms set forth below.

Հիմք ընդունելով «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի, Մաքսային Միության մաքսային օրենսգրքի, ՀՀ կառավարության 16.02.2012թ. «Սուրհանդակային կապի օպերատորի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 173-Ն որոշման պահանջները՝ համաձայնվում են ստորև նշված պայմանների շուրջ:

1. AIA shall hand over the courier items available in the cargo addressed to the Customer, arrived in the Cargo Terminal under the waybills mentioned in Appendix 1 attached to the Request submitted by the Customer, based on the list given in Appendix 1 submitted by the Customer, and the Customer undertakes to pay for it in the manner and within the period specified in this Request.

2. The Customer shall hand over all the documents to AIA required for proper performance of the duties of handing over courier items to recipients. The Customer bears responsibility for the accuracy and reliability of the documents.

3. The Customer shall inform AIA immediately about the return of the courier item to the sender in case of impossibility to hand the courier item over to the recipient or in case the recipient refuses to receive

1. ԱՄՕ-ն պարտավորվում է կատարել Պատվիրատուի կողմից _____թ.-ին տրված Պատվերի Հավելված 1-ում նշված բեռնագրերով Բեռնային համալիր ժամանած, Պատվիրատուին հասցեագրված բեռներում առկա սուրհանդակային առաքանիների հանձնում դրանց ստացողներին՝ ըստ Պատվիրատուի կողմից ներկայացված սույն Պատվերի Հավելված 1-ում ներկայացված ցուցակի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա դիմաց սույն Պատվերում նշված կարգով և ժամկետներում:

2. Պատվիրատուն պարտավորվում է ԱՄՕ-ին հանձնել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են սուրհանդակային առաքանիները ստացողներին հանձնելու պարտականությունը պատշաճ կատարելու համար: Պատվիրատուն պատասխանատվություն է կրում ներկայացված փաստաթղթերի հավաստիության և պատշաճության համար:

3. Պատվիրատուն պարտավորվում է սուրհանդակային առաքանին ստացողին հանձնելու անհնարինության կամ ստացողի կողմից սուրհանդակային առաքանին

the courier item, based on which a relevant note "*Returned to sender*" is made on the corresponding line of the list presented in Appendix 1 attached to the given Request and confirmed by the signature of the Customer's authorized representative mentioned in Appendix 2 of the Request submitted by the Customer on ---------- .

4. AIA shall transfer to the Customer the documents certifying the handover of the courier items to the recipients.

5. The Customer shall pay AIA the fee for the service of handing over the courier items to recipients, which is calculated based on the tariffs published in Aeronautical Information Publication (AIP).

6. AIA shall issue the invoices to the Customer for handing over the courier items to the recipients at the end of each month.

7. The payment for the invoices issued by AIA shall be made within 5 days after submitting them.

8. Pursuant to this Request, handing over the courier items to the recipients cannot be regarded as assumption by AIA of the content of the activity of the Customer as a Courier communication operator. In addition, it does not result in any responsibility for AIA related to the rendering of courier communication services by the Customer.

ստանալուց հրաժարվելու դեպքում սուրհանդակային առաքանին ուղարկողին վերադարձնելու մասին անհապաղ հայտնել ԱՄՕ-ին, որին համապատասխան սույն Պատվերին կից Հավելված 1-ում ներկայացված ցուցակի համապատասխան տողում կատարվում է նշում՝ «*Վերադարձվել է ուղարկողին*» և հաստատվում _____թ.-ին Պատվիրատուի կողմից տրված Պատվերի Հավելված 2-ում նշված Պատվիրատուի լիազոր ներկայացուցչի ստորագրությամբ:

4. ԱՄՕ-ն պարտավորվում է սուրհանդակային առաքանին ստացողին հանձնելուց հետո հանձնման փաստը հավաստող փաստաթղթերը փոխանցել Պատվիրատուին:

5. Սուրհանդակային առաքանիները ստացողներին հանձնելու ծառայության դիմաց Պատվիրատուն պարտավորվում է վճարել ԱՄՕ-ին վճար, որը հաշվարկվում է Աերոնավիգացիոն Տեղեկատվության Հրատարակությունում (AIP) հրապարակված սակագներին համապատասխան:

6. Սուրհանդակային առաքանիները ստացողներին հանձնելու համար ԱՄՕ-ն Պատվիրատուին է ներկայացնում հաշիվ-ապրանքագիր՝ յուրաքանչյուր ամսվա վերջում:

7. ԱՄՕ կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի դիմաց վճարումը կատարվում է դրանք ներկայացնելուց հետո 5 օրվա ընթացքում:

8. Սույն պատվերին համապատասխան սուրհանդակային առաքանին ստացողին հանձնելը չի հանդիսանում Պատվիրատուի՝ որպես սուրհանդակային կապի օպերատորի գործունեության բովանդակային մասի ստանձնում ԱՄՕ-ի կողմից և չի առաջացնում վերջինիս համար որևէ պատասխանատվություն կապված Պատվիրատուի կողմից սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման հետ:

9. This Request is drawn up in English and Armenian, in 2 copies having equal legal force, one copy for each party.

9. Սույն պատվերը կազմված է անգլերեն և հայերեն լեզուներով, հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

CUSTOMER
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____

"ARMENIA" INTERNATIONAL AIRPORTS" CJSC
«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

_____

REQUEST
FOR COURIER ITEMS SORTING AND STORAGE SERVICES AT "ZVARTNOTS" INTERNATIONAL AIRPORT CARGO TERMINAL

Yerevan 2017

"ARMENIA" INTERNATIONAL AIRPORTS" CJSC (Taxpayer ID 02562664, legal domicile 0010 RA, Yerevan, Mashtots avenue 13, activity domicile RA, Yerevan-42, "Zvartnots" International Airport, AIA building) represented by _____ Mr. _____, acting on the basis of the power of attorney, hereinafter **AIA,** on one hand,

and

_____(Taxpayer ID _____, activity domicile _____) represented by _____ Mr. _____, acting on the basis of _____,

hereinafter referred to as the **Customer**, on the other hand,

collectively hereinafter the Parties:

Whereas:

- The Customer carries out delivery of international courier items. Such process includes sorting, transportation and delivery of the courier item from the office of the courier operator to the recipient,
- The courier items to be delivered by the Customer arrive at "Zvartnots" International Airport Cargo Terminal, hereinafter Cargo Terminal, in the form of one-piece cargo addressed to the Customer,
- The Customer does not have the technical means and relevant area required for sorting and storing the courier items subject to customs declaration available in the goods in the Cargo Terminal,

ՊԱՏՎԵՐ
«ԶՎԱՐԹՆՈՑ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ԲԵՌՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՔԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ և ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան __.___.2017թ.

«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» փակ բաժնետիրական ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02562664, գտնվելու վայրը՝ 0010 ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պողոտա 13, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան-42, Զվարթնոց միջազգային օդանավակայան, ԱՄՕ-ի շենք), ի դեմս _____ պարոն _____, որը գործում է լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ **ԱՄՕ**, մի կողմից,

և

_____, (ՀՎՀՀ՝ _____, գտնվելու վայրը՝ _____), ի դեմս _____ պարոն _____ի, որը գործում է _____ հիման վրա, այսուհետ՝ **Պատվիրատու**, մյուս կողմից,

միասին անվանվելով Կողմեր.

Հաշվի առնելով, որ

- Պատվիրատուն իրականացնում է միջազգային սուրհանդակային առաքանիների առաքում, որպիսի գործընթացն իր մեջ ներառում է սուրհանդակային կապի օպերատորի գրասենյակից՝ սուրհանդակային առաքանու տեսակավորումը, փոխադրումը և հանձնումն ստացողին,
- Պատվիրատուի կողմից հանձնման ենթակա սուրհանդակային առաքանիները ժամանում են Զվարթնոց միջազգային օդանավակայանի բեռնային համալիր, այսուհետ՝ Բեռնային համալիր՝ Պատվիրատուին հասցեագրված միասնական բեռների տեսքով,
- Պատվիրատուն չունի Բեռնային համալիր ժամանած բեռներում առկա, մաքսային մարմիններում հայտարարագրման ենթակա

- The Customer wishes to sort and store the courier items subject to customs declaration on the territory of the Cargo Terminal with technical means and specialists of the latter, and AIA agrees to render sorting and storing services of the goods and courier items arrived in the Cargo Terminal in the name of the Customer,

Based on the requirements of RA Law "On Postal Communication", RA Law "On Customs Regulation", Customs Code of the Customs Union, RA Government Decree N 173-N dated 16.02.2012 "On Approving the Regulations of Courier Communication Operator" they agree on the terms set forth below.

1. AIA undertakes to sort and store the courier items available in the cargo addressed to the Customer, arrived in the Cargo Terminal under the waybills mentioned in Appendix 1 attached to this Request, and the Customer undertakes to pay for it in the manner and within the period specified in this Request.

1.1.Sorting

1.1.1.AIA shall sort the courier items with its own technical equipment after the cargo addressed to the Customer arrives in the Cargo Terminal.

1.1.2.The Customer undertakes to ensure mandatory presence of his representative during the whole sorting process of the courier item.

սուրհանդակային առաքանիների տեսակավորման և պահպանման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և համապատասխան տարածք,

- Պատվիրատուն ցանկանում է մաքսային մարմիններում հայտարարագրման ենթակա սուրհանդակային առաքանիները տեսակավորել և իրականացնել դրանց պահպանությունը Զվարթնոց միջազգային օդանավակայանի բեռնային համալիրի տարածքում, վերջինիս տեխնիկական միջոցներով և մասնագետների աջակցությամբ, իսկ ԱՄՕ-ն համաձայն է Պատվիրատուին մատուցել Պատվիրատուի անունով Բեռնային համալիր ժամանած բեռների և դրանցում առկա սուրհանդակային առաքանիների տեսակավորման և պահպանության ծառայություն,

Հիմք ընդունելով «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի, Մաքսային Միության մաքսային օրենսգրքի, ՀՀ կառավարության 16.02.2012թ. «Սուրհանդակային կապի օպերատորի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 173-Ն որոշման պահանջները՝ համաձայնվում են ստորև նշված պայմանների շուրջ:

1. ԱՄՕ-ն պարտավորվում է կատարել սույն Պատվերին կից ներկայացված հավելված 1-ում նշված բեռնագրերով Բեռնային համալիր ժամանած, Պատվիրատուին հասցեագրված բեռներում առկա սուրհանդակային առաքանիների տեսակավորում և պահպանություն, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա դիմաց սույն Պատվերում նշված կարգով և ժամկետներում:

1.1. Տեսակավորում

1.1.1. ԱՄՕ-ն սուրհանդակային առաքանու տեսակավորումն իրականացնում է իր տեխնիկական միջոցներով Պատվիրատուին հասցեագրված բեռը Բեռնային համալիր ժամանելուց հետո:

1.1.2. Պատվիրատուն պարտավորվում է ապահովել իր ներկայացուցչի պարտադիր ներկայությունը սուրհանդակային

1.1.3. Courier items sorting shall be carried out only in the presence of a representative of the Customer, in accordance with the instructions given by the latter. The list of the Customer's authorized representatives is presented in Appendix 2 attached to the given Request. Courier items sorting in accordance with the instructions of the Customer cannot result in any responsibility for AIA.

1.1.4. Tariffs for courier items sorting are published in Aeronautical Information Publication (AIP).

1.2. Storing

1.2.1. Courier items shall be stored in the area allocated for it at the Cargo Terminal until the courier item is handed over to the recipient or is sent back to the sender due to inability to hand it over to the recipient, but no longer than for one month.

1.2.2. During the whole period of courier item storing the Customer's representative presented in Appendix 2 attached to this Request can have access to the area of courier items storing to take necessary measures for handing over the courier items.

1.2.3. No fee shall be charged from the Customer for the first 48 hours starting from the arrival of courier items in the Cargo Terminal. After that AIA shall start calculating fee for storing Customer's courier items in accordance with the tariffs published in Aeronautical Information Publication (AIP).

առաքանու տեսակավորման ամբողջ ընթացքում:

1.1.3. Սուրհանդակային առաքանու տեսակավորումն իրականացվում է միայն Պատվիրատուի ներկայացուցչի ներկայությամբ՝ վերջինիս կողմից տրված ցուցումներին համապատասխան: Նման իրավասություն ունեցող Պատվիրատուի ներկայացուցիչների ցանկը ներկայացված է սույն Պատվերին կից Հավելված 2-ում: Պատվիրատուի ցուցումներին համապատասխան սուրհանդակային առաքանիների տեսակավորումը ԱՄՕ-ի համար չի կարող առաջացնել որևէ պատասխանատվություն:

1.1.4. Սուրհանդակային առաքանիների տեսակավորման սակագները հրապարակված են Աերոնավիգացիոն Տեղեկատվության Հրատարակությունում (AIP):

1.2. Պահպանություն

1.2.1. Սուրհանդակային առաքանիների պահպանությունն իրականացվում է Բեռնային համալիրում դրա համար հատկացված հատվածում՝ մինչև սուրհանդակային առաքանին ստացողին հանձնելը կամ սուրհանդակային առաքանին ստացողին հանձնելու անհնարինության պատճառով այն ուղարկողին վերադարձնելը, սակայն ոչ ավել, քան մեկ ամիս ժամկետով:

1.2.2. Սուրհանդակային առաքանու պահպանության ամբողջ ընթացքում սույն Պատվերին կից Հավելված 2-ում ներկայացված Պատվիրատուի ներկայացուցիչները կարող են մուտք գործել սուրհանդակային առաքանիների պահպանության տարածք՝ սուրհանդակային առաքանիները հանձնելու համար անհրաժեշտ գործողություններ կատարելու նպատակով:

1.2.3. Բեռնային համալիր ժամանելուց սկսած սուրհանդակային առաքանիների պահպանության առաջին 48 ժամի դիմաց Պատվիրատուից վճար չի գանձվում: Դրանից հետո ԱՄՕ-ն սկսում է հաշվարկել

Պատվիրատուի սուրհանդակային առաքանիների պահպանության վճար՝ Աերոնավիգացիոն Տեղեկատվության Հրատարակությունում (AIP) հրապարակված սակագներին համապատասխան:

1.3. Payment Terms

1.3.1. AIA shall issue an invoice to the Customer for sorting and storing courier items at the end of each month.

1.3.2. The payment for the invoices issued by AIA shall be made within 5 days after submitting them.

2. Pursuant to this Request, sorting and storing of the courier item cannot be regarded as assumption by AIA of the content of the activity of the Customer as a Courier communication operator. In addition, it does not result in any responsibility for AIA related to the rendering of courier communication services by the Customer.

3. This Request is drawn up in English and Armenian, in 2 copies having equal legal force, one copy for each party.

1.3. Վճարման կարգ

1.3.1. Սուրհանդակային առաքանիների տեսակավորման և պահպանության համար ԱՄՕ-ն Պատվիրատուին է ներկայացնում հաշիվ-ապրանքագիր՝ յուրաքանչյուր ամսվա վերջում:

1.3.2. ԱՄՕ կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի դիմաց վճարումը կատարվում է դրանք ներկայացնելուց հետո 5 օրվա ընթացքում:

2. Սույն պատվերին համապատասխան սուրհանդակային առաքանու տեսակավորումն ու պահպանությունը չեն հանդիսանում Պատվիրատուի՝ որպես սուրհանդակային կապի օպերատորի գործունեության բովանդակային մասի ստանձնում ԱՄՕ-ի կողմից և չի առաջացնում վերջինիս համար որևէ պատասխանատվություն կապված Պատվիրատուի կողմից սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման հետ:

3. Սույն պատվերը կազմված է անգլերեն և հայերեն լեզուներով, հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

CUSTOMER
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____

"ARMENIA" INTERNATIONAL AIRPORTS" CJSC
«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

_____

Appendix 2
to the Request_____

Հավելված 2
_____ Պատվերի

THE LIST OF THE REPRESENTATIVES OF _____ AUTHORIZED TO HAVE ACCESS TO "ZVARTNOTS" INTERNATIONAL AIRPORT CARGO TERMINAL

«ԶՎԱՐԹՆՈՑ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ԲԵՌՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ _____-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

N	Name, Surname Անուն, Ազգանուն	Passport number Անձնագրի սերիա, համար	Signature Ստորագրություն
1.			
2.			
3.			
4.			
5.			
6.			
7.			

_____

_____

"ARMENIA" INTERNATIONAL AIRPORTS" CJSC
«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

_____

Appendix 1
*to the Request*_____

Հավելված 1
_____ *Պատվերի*

THE LIST OF THE COURIER ITEMS SORTED AND STORED IN "ZVARTNOTS" INTERNATIONAL AIRPORT CARGO TERMINAL

«ԶՎԱՐԹՆՈՑ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ԲԵՌՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ԺԱՄԱՆԱԾ ՏԵՍԱԿԱՎՈՐՎՈՂ ԵՎ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՔԱՆԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

N	Air waybill № Ավիաբեռնագրի համար	Pieces Կտրոնների քանակ	Weight (kg) Քաշ (կգ)	Time Ժամ	Notes Նշումներ
1.					
2.					
3.					
4.					
5.					

CUSTOMER
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____

"ARMENIA" INTERNATIONAL AIRPORTS" CJSC
«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

_____

Appendix 1
to the Request_____

Հավելված
_____ Պատվեր

THE LIST OF THE RECIPIENTS OF THE COURIER ITEMS ARRIVED UNDER AIR WAYBILL №_____ IN "ZVARTNOTS" INTERNATIONAL AIRPORT CARGO TERMINAL

«ԶՎԱՐԹՆՈՑ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ԲԵՌՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ թիվ _____ ԱՎԻԱԲԵՌՆԱԳՐՈՎ ԺԱՄԱՆԱԿ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՔԱՆԻՆԵՐԸ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿ

N	Recipient's name, surname Ստացողի անուն, ազգանուն	Passport number Անձնագրի սերիա, համար	Tracking N Tracking N	Quantity of the courier items Առաքանիներ ի քանակ	Weight (kg) Քաշ (կգ)	Date, time of receipt* Ստացման օր, ժամ*	Signature* Ստորագրություն
1.							
2.							
3.							
4.							
5.							
6.							
7.							
8.							
9.							
10.							
11.							
12.							

Columns marked with * are completed in Cargo Terminal at the time of the postal item handover.
The remaining columns are completed by the CUSTOMER in advance.

* Նշումով սյունակները լրացվում են Բեռնային Համալիրում փոստային առաքանին հանձնելու պահին: Մնացած սյուները նախապես լրացվում են ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ կողմից:

CUSTOMER
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____

"ARMENIA" INTERNATIONAL AIRPORTS" CJSC
«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

_____

UMAKS
LOGISTICS COMPANY

«ԱՐՄԵՆԻԱ» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ
«ARMENIA» International Airports» C.J.S.C.
ՍՏԱՑՎԱԾ Է RECEIVED
Մտից:/REF. Ամսաթիվ/DATA 07.03.17

<<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ ՓԲԸ-ի
գլխավոր մենեջերի տեղակալ՝ պարոն Ա.Շխյանին

Ի պատասխան 02.03.2017 թվականի թիվ 100/AMD/17 գրության

Հարգելի պարոն Շխյան,

Տեղեկացնում եմ, որ որևէ առարկություն չունեմ Ձեզ ներկայացնելու այն անձանց ցուցակը և նրանց լիազորագրերը,ովքեր <<Ցումակս>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ <<Ընկերություն>>)անունից իրավունք ունեն հանդես գալու <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի բեռնային համալիրում:

Ինչ վերաբերվում է Ձեր կողմից ներկայացված*<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի բեռնային համալիրում <<Սուրհանդակային առաքանիների տեսակավորման և պահեստավորման ծառայությունների մատուցման պայմեր>>*վերնագրված փաստաթղթին (այսուհետ՝ <<Պայմանագիր>>), ապա դրա վերաբերյալ ունեմ առարկություններ, որոնք կներկայացնեմ ստորև:

Նշեմ, որ Պայմանագրում ներկայացված միակողմանի պայմանները անընդունելի են և պրակտիկորեն անիրագործելի, բացի այդ, Պայմանագրում տրված են ձևակերպումներ, որոնք իրավաչափ չեն:

Այսպես, ՀՀ տարածք ժամանած առաքանիները պետք է ստանան մաքսային ձևակերպումներ և Ընկերության պահեստ դրանք կարող են տեղափոխվել միայն մաքսային մարմինների կողմից տրված թույլտվության դեպքում՝ <<Մաքսային կարգավորման մասին>> օրենքի 154-րդ հոդվածով[1] նախատեսված դեպքերում:

Պայմանագրի 1.2.1. նախատեսված մեկ ամսյա ժամկետը ողջամիտ ժամկետ չէ, միաժամանակ,Պայմանագրով չի կարգավորվում այն հարցը, թե մեկ ամսյա ժամկետը

[1]Ստացողի պահեստում ապրանքների ժամանակավոր պահպանությունը կարող է իրականացվել հետևյալ դեպքերում.

1) պահպանության հատուկ պայմաններ պահանջող ապրանքները ժամանակավոր պահպանության հանձնելու դեպքում.

2) եթե ապրանքներ ստացողը պետական մարմին է.

3) եթե եղանակային կամ աշխարհագրական պայմանների պատճառո անհնար է ապրանքների տեղափոխումը ժամանակավոր պահպանության վայրեր:

"ՑՈՒՄԱԿՍ" ՍՊԸ
ՀՀ 0002 Երևան • Դեմիրճյան 36, # 1ա
Հեռ.՝ (374 10) 58 66 88
Ֆաքս (374 10) 54 66 88
էլ.փոստ՝ evnstn@dhl.com

"UMAKS" LLC
36 Demirchyan St., # 1a
00002 • Yerevan • Republic of Armenia
Phone: (374 10) 58 66 88 • Fax: (374 10) 54 66 88
e-mail: evnstn@dhl.com

ООО «ЮМАКС»
Республика Армения • 00002 • Ереван
ул. Демирчяна 36, # 1a
Тел.: : (374 10) 58 66 88 • Факс: (374 10) 54 66 88
эл.почта: evnstn@dhl.com

լրանալուց հետո ինչ ճակատագիր է սպասվում չպահանջված առաքանիներին:Նշված հարցը իրավական տեսանկյունից հստակ կարգավորված չէ ՀՀ օրենսդրությամբ և Դուք նման Պայմանագրով Ընկերությանը ուղղակի փակուղու առջև եք կանգնեցնում: Պայմանագրի 1.2.3. կետով նախատեսված անվճար 48 ժամը, նույնպես անընդունելի է, քանի որ հասկանալի է, որ այդ ժամկետում անհրաժեշտ ձևակերպումներ կատարելը ուղղակի իրատեսական չէ:

Ձեզ շատ լավ հայտնի է, որ Ընկերությունը աշխատում է բացառապես ողջամիտ ժամկետներում և շուկայում հայտնի է իր պարտաճանաչությամբ և ճշտապահությամբ, բնականաբար, սեղմ ժամկետներում տեղավորվելը բխում է առաջին հերթին Ընկերության շահերից: Բայց Ձեր կողմից նշված ժամկետը՝ ուղղակի իրագործելի չէ:

Իրավացիորեն հարց է առաջանում, թե ինչու Ընկերությունը պետք է վճարի մի բանի համար, ինչը նախատեսված չէ օրենքով՝ ավելին, չկան հարցի վերաբերյալ անհրաժեշտ իրավական կարգավորումներ:

Գտնում եմ, որ իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Օրենքը բացառում է հարկադրաբար պայմանագիր կնքելը: Իրավաչափ Պայմանագիր կնքելու նպատակով առաջարկում եմ սկսել բանակցային գործընթաց՝ քննարկելով պայմանագրային դրույթները և ձևավորել իրավաչափ փաստաթուղթ, որը կբերի փոխադարձ հարգանքի վրա հիմնված գործընկերային հարաբերությունների զարգացմանը:

Այս պահի դրությամբ, ես ուղղակի իրավաչափ չեմ համարում Ձեր կողմից Ընկերությանը հարկադրել ստորագրել նման պայմանագիր և գտնում եմ, որ Դուք չարաշահում եք Ձեր մենաշնորհային դիրքը՝ Ընկերությանը փակուղու առաջ կանգնեցնելով, ավելին՝ հաշվի չեք առնում այն կարևոր հանգամանքը, որ իրավական տեսանկյունից հարցը ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ և Ընկերության կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ (վարչական գործ թիվ ՎԴ/0880/05/17) հարցի լուծման համար անհրաժեշտ իրավական կարգավորումներ ստանալու ուղղությամբ:

Ամփոփելով վերը նշվածը, առաջարկում եմ վերանայել Ձեր դիրքորոշումը՝ պարտադրելու Ընկերությանը կնքել ոչ իրավաչափ Պայմանագիր, և սկսել բանակցային գործընթաց պայմանագրային դրույթների համատեղ քննարկման ուղղությամբ:

Հարգանքով

<<Յումակս>> ՍՊԸ-ի տնօրեն Միխաիլ Յուխանան

06.03.2017թ.